

ԳԻՏԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆ ԷԴՈՒԱՐԴ ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ

Է. Ս. ՄԱՐԳԱՐՅԱՆ, *Ընտրանի. Գիտություն մշակույթի մասին և դարաշրջանի հրամայականները, Մ.-ՍՊԲ, «Հումանիտար» նախաձեռնությունների կենտրոն, 2014, 656 էջ:*



Փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, անվանի մշակութաբան, մեծ հումանիստ Էդուարդ Մարգարի Մարգարյանը (1929-2011) ավելի քան կես դար աշխատել է ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտում: Երկարատև գիտական գործունեության ընթացքում Է. Մարգարյանը հրապարակել է շուրջ 200 աշխատություն, այդ թվում՝ ավելի քան 30 մենագրություն, որոնք տպագրվել են Հայաստանում, Ռուսաստանում և աշխարհի այլ երկրներում: Է. Մարգարյանը 2006 թ. ընտրվել է Ռուսաստանյան մշակութաբանական (գիտակրթական) ընկերության պատվավոր անդամ: 2009 թ. պետերբուրգյան փիլիսոփայական օրերի շրջանակում Սանկտ Պետերբուրգում կազմակերպվել է Է. Մարգարյանի ծննդյան 80-ամյակին նվիրված միջազգային գիտաժողով, որի նյութերը հետագայում ամփոփվել են գիտական հոդվածների ժողովածուում¹:

2014 թ. Մոսկվա-Սանկտ Պետերբուրգի հումանիտար նախաձեռնությունների կենտրոնը ծննդյան 85-ամյա հոբելյանի օրերին «Մշակութաբանություն. XX դար» մատենաշարով լույս է ընծայել Է. Ս. Մարգարյանի երկերի ընտրանին², որում ընդգրկվել են նրա գուտ մշակութաբանական հիմնարար հետազոտությունները՝ «Մշակույթի տեսության ակնարկներ», «Մշակույթի տեսությունը և ժամանակակից գիտությունը», «Մշակույթի մասին գիտությունը և դարաշրջանի հրամայականները», ինչպես նաև երկու ոչ ծավալուն գործեր, որոնք Է. Մարգարյանի գիտական ժառանգության կարևոր մասն են:

¹ *Культурология и глобальные вызовы современности: к разработке гуманистической идеологии самосохранения человечества: Сборник научных статей, посвященный 80-летию Э. С. Маркаряна (Под общ. ред. А. В. Бондарева и Л. М. Мосоловой), СПб., 2010.*

² *Маркарян Э. С. Избранное. Наука о культуре и императивы эпохи (Отв. ред. и составитель А. В. Бондарев), М.-СПб., 2014, 656 с.*

«Ընտրանին» կազմող և պատասխանատու խմբագիր Ա. Վ. Բոնդարևը իր ամփոփիչ խոսքը³ սկսում է հետևյալ կերպ. «Յուրաքանչյուր գիտության մեջ կան խորհրդանշական դեմքեր, որոնք նշանակալի չափով որոշում են դրա ընդհանուր զարգացման ու հետազոտական որոնումների բովանդակությունը: XX դարի երկրորդ կեսի հայրենական մշակութաբանության համար այդպիսի նշանավոր դեմքերից մեկը Էդուարդ Մարգսի Մարգարյանն էր»⁴: Է. Մարգարյանի կարծիքով՝ թեև մշակութաբանության գաղափարն ու հասկացությունը իրարից անկախ ծնվեցին Արևմուտքում (Գերմանիայում և ԱՄՆ-ում), սակայն այնտեղ մինչև այսօր դրանք չեն ընկալվում իբրև գիտակարգ: Այս հասկացության նկատմամբ ավելի մեծ հետաքրքրություն առաջացավ մոտ քառասուն տարի անց, երբ մշակութաբանությունն արդեն էականորեն զարգացել և հիմնավորվել էր Հայաստանում⁵: Ռուսաստանի գիտական շրջանակներում Է. Մարգարյանը ճանաչվում է իբրև «ռուսական մշակութաբանության սկզբնավորող»⁶. «Շնորհիվ Է. Մարգարյանի եռանդուն ջանքերի և հաստատակամության՝ մշակութաբանությունը հաստատվեց սոցիալ-հումանիտար գիտությունների գիտակարգային դաշտում՝ գրեթե ողջ հետխորհրդային տարածքում»⁷:

«Մշակույթի տեսության ակնարկների»⁸ առաջին մասի բաժինները նպատակաուղղված են մշակույթի էության բացահայտմանն ու բնութագրմանը: «Մշակույթ» հասկացության ճանաչողական գործառույթը, համաձայն Է. Մարգարյանի, հանգում է մարդկային գործունեության ընդհանուր յուրահատկության ու կյանքի կենսաբանական ձևերից տարբերության հաստատագրմանը: Նշված հասկացության արտահայտությունը ոչ այլ ինչ է, քան մարդկանց գործունեության յուրահատուկ եղանակ և դրա արդյունքներում առարկայացած հետևանք: Մարդու մշակած արտակենսաբանական համակարգը իր գործառույթները կատարում է երկու հիմնական հարթությունում՝ հասարակության՝ իբրև գործողության կոլեկտիվ սուբյեկտի ու արտաքին բնական միջավայրի, և մարդկային անհատների փոխազդեցության պլաններում՝ վերջինիս գործողությունները կարգավորելով, համակարգելով և ուղղորդելով սոցիալական որոշակի նշանակալից նպատակների նվաճմանը: Ըստ գիտնականի՝ «մշակույթ» հասկացությունը կարելի է սահմանել որպես մարդկանց կոլեկտիվ կյանքի յուրահատուկ գործառույթ, որը մշակվում է արտաքին միջավայրի նկատմամբ նրանց յուրահատուկ աշխատանքային ակտիվ հարաբերության գործընթացում: Մշակույթը, լինելով մարդկային գոյության ու գործունեության ընդհանուր եղանակ, առարկայանում է զա-

³ **Бондарев А. В.** Третье рождение культурологии: Вклад Э. С. Маркаряна в разработку культурологической теории культуры. В кн. **Маркарян Э. С.,** Избранное..., с. 563-625.

⁴ *Նույն տեղում*, էջ 563:

⁵ **Маркарян Э. С.** Гуманизм 21-го столетия. Идеология самосохранения человечества, Е., 2008, с. 401.

⁶ **Флиер А. Я.** К открытию новой рубрики (Философские науки, 2000, - 2, с. 17).

⁷ **Бондарев А. В.,** նշվ. աշխ., էջ 587:

⁸ **Маркарян Э. С.** Очерки теории культуры, Е., 1969.

նագան արդյունքներում: Մշակույթը, իբրև մարդկային գործունեության արդյունք, կարող է ընդգրկել սոցիալական համակարգի գործառնության համար ինչպես դրական, այնպես էլ բացասական նշանակության տարրեր: Մշակույթն իր հիմքում խորապես տեխնոլոգիական է՝ որքանով այն մշակվել է որպես ամենատարբեր հիմնախրնդիրների (որոնք ծագում են մարդկանց բազմաբնույթ գործունեության ընթացքում) լուծման եղանակների ու միջոցների յուրահատուկ համակարգ:

«Ակնարկների» երկրորդ մասը նվիրված է մշակութային պատմական տիպաբանության հիմնախնդիրների քննությանը: Նրա մշակած հասկացությունների շնորհիվ հնարավոր են դառնում սոցիալ-պատմական համակարգերի հետազոտումն ու վերարտադրումը: Է. Մարգարյանն առաջադրեց «լոկալ մշակույթ» (քաղաքակրթություն) տերմինը. համարժեք մշակույթների հայեցակարգի ներկայացուցիչները նկատի են առնում հենց լոկալ մշակութային-պատմական համակարգերը, իսկ «մշակույթ» (քաղաքակրթություն) ընդհանուր հասկացությունը կարող է տրամաբանորեն կառուցվել նաև այլ կերպ և արտահայտել արդեն ոչ թե մշակույթի լոկալ կազմավորումները, այլ դրանց համապատասխան ընդհանուր տիպերը:

Ուշագրավ է, որ «լոկալ մշակույթ» հասկացությունը, հետազոտողի ուշադրությունը ակամա հրավիրելով տարբեր ժողովուրդների մշակութային-պատմական գործունեության յուրահատկությունների վրա, ըստ էության, տեսադաշտից դուրս է թողնում դրան հատուկ ընդհանուր գծերը: Բսկ այդ գծերը չեն կարող բացահայտվել առանց այլ կարգի հասկացությունների ներմուծման՝ ուղղված արդեն ոչ թե հետազոտվող օբյեկտների անհատական յուրահատկության վերարտադրությանը, այլ դրանց բովանդակային ընդհանրության բացահայտմանը: Այս կարգի հասկացությունները Մարգարյանն անվանում է ընդհանուր պատմատիպաբանական: Այստեղ հետազոտողը գործ ունի համաշխարհային պատմական գործընթացի ընդհանուր ու տարբերիչ գծերի փոխհարաբերության խնդրի հետ՝ ժամանակային ու տարածական լայն չափումներով:

«Ընտրանու» մեջ ընդգրկված ոչ ծավալուն աշխատանքներից առաջինում⁹ գիտնականը նշում է, որ տեսական նախադրյալների հիմքում ինքնակազմակերպման սկզբունքներն են: Դրանք արտացոլում են տեղեկատվորեն կարգավորվող համակարգերի ընդհանուր օրինաչափությունները, որոնք միջավայրի հետ փոխազդեցության ընթացքում ընդունակ են հարմարվողական ինքնաուղղման և առաջադիմական էվոլյուցիայի՝ հակադարձ կապի մեխանիզմների օգտագործմամբ: Այս համատեքստում մշակույթը ևս դիտարկվում է որպես սոցիալական ինքնակազմակերպման եղանակ: Մյուս գրքույկում,¹⁰ անդրադառնալով նաև արդի ԳՏՀ հիմնահարցերին, նշում է, որ դրանք լուծում են հիմնարար կառավարչական խնդիրներ: Աստիճանաբար ավելի

⁹ Маркарян Э. С. Инварианты самоорганизации и проблемы эколого- энергетического исследования общества. Пушино, 1981, 19 с.

¹⁰ Маркарян Э. С. Культура как способ социальной самоорганизации. Общая постановка проблемы и е, анализ применительно к НТР. Пушино, 1982, 15 с.

ակնհայտ է դառնում, որ ՉՏՀ ռազմավարական նշանակությունը երկու հիմնարար տեխնոլոգիաների համապատասխանեցման ու համակարգային հարաբերակցության հաստատման մեջ է. նյութական տեխնոլոգիայի, որի շնորհիվ իրականանում է հասարակության և բնական միջավայրի փոխազդեցությունը, և սոցիալական տեխնոլոգիայի, որն ուղղված է մարդկանց միջև հարաբերությունների կարգավորմանն ու հասարակական օրգանիզմի պահպանմանը: Ուստի գիտատեխնիկական հեղափոխություն ասելով պետք է հասկանալ ոչ միայն հեղափոխական տեղաշարժերը նյութական տեխնոլոգիայում և բնագիտության համապատասխան բնագավառներում, այլև նմանօրինակ տեղաշարժերը սոցիալական տեխնոլոգիայում, ինչպես և այն հասարակական գիտությունների ոլորտներում, որոնք կոչված կատարելագործելու դրանք:

«Հնտրանու» երկրորդ ծավալուն հետազոտությունը¹¹ նվիրված է մշակույթի տեսության տրամաբանական-մեթոդաբանական հարցերի քննությանը: Է. Մարգարյանը ԽՍՀՄ-ում առաջիններից մեկն էր, որ հանդես եկավ մշակութաբանության իբրև հասարակագիտության յուրահատուկ բնագավառի առանձնացման անհրաժեշտության պահանջով:

Հետազոտության առաջին բաժինը սկսվում է Լ. Ուայտի հայացքների քննադատական վերլուծությամբ: Մշակութաբանը Լ. Ուայտի աշխատանքների քննությամբ վերհանեց նրա հայացքների ինչպես ուժեղ, այնպես էլ թույլ կողմերը: Անհրաժեշտություն առաջացավ դրանք լրացնելու, հարստացնելու՝ օգտագործելով պատմության մատերիալիստական ըմբռնման տեսության հիմնարար գաղափարները: Հաջորդ բաժնում մշակույթը քննվում է իբրև համակարգ: Զարգացնելով դոկտորական ատենախոսության մեջ առաջ քաշված համակարգային մոտեցման գաղափարները՝ Է. Մարգարյանը մասնավորապես առանձնացնում է մշակույթի սոցիո-կարգավորիչ, բնական-էկոլոգիական և հասարակական-էկոլոգիական ենթահամակարգերը, որոնք ոչ թե ինքնաբավ կազմավորումներ են, այլ մարդկային գործունեության միջոցների փոխկապված և փոխապահովող համալիրներ: Մշակույթի այս ենթակարգերի տարբերակումը տեսական հիմք ստեղծեց ընդհանուր համակարգային մոդելի մշակման համար՝ հիմնված հասարակության զարգացման իրական գործընթացների վրա:

Մշակույթի համակարգային հետազոտության արդյունքում Է. Մարգարյանը առաջադրում է նոր սահմանում, որը մշակույթի տեսության, մշակութաբանության հիմքն է: «Մշակույթ» երևույթի դասին են պատկանում վերկենսաբանական, հասարակական կյանքի ծագման ու հետագա զարգացման գործընթացում մշակված միջոցները, որոնք ապահովում են դրանց ակտիվությունը կենսագործունեության տարբեր ոլորտներում: Մշակույթի՝ որպես մարդկանց գործունեության միջոցի այս հիմնարար հատկությունը արտահայտում է դրա բուն էությունը և միասնականացնում բոլոր բնութագրերը: Նշված հատկության առանձնացումը թույլ է տալիս մշակույթը դիտարկել լայն

¹¹Маркарян Э. С. Теория культуры и современная наука, М., 1983.

առումով՝ որպես ցանկացած հասարակության համընդհանուր հատկանիշ՝ անկախ զարգացման մակարդակից:

«Մշակույթ» հասկացության ճանաչողական նշանակությունն այն է, որ հնարավորություն է տալիս հստակ սահմանազատելու մարդկային և կենդանական աշխարհների կենսագործունեությունը: Դրա համար էլ է. Մարգարյանը մարդկային գործունեությունը սահմանում է որպես սոցիալական ակտիվություն, որը ծրագրավորվում և իրականացվում է մշակույթի մեխանիզմների օգնությամբ:

Մենագրության երկրորդ բաժնում առանձնացվում է հիմնախնդիրների երեք խումբ: Առաջինը վերաբերում է ընդհանուր մշակութաբանական սկզբունքների կիրառմանը: Երկրորդը կապված է տվյալ սկզբունքներին առնչվող հիմնարար տեսական և մեթոդաբանական խնդիրների լուծման հետ, որոնք ծագում են մշակույթի պատմական հետազոտության ընթացքում: Ինչ վերաբերում է երրորդ խմբին, ապա դա յուրահատուկ բնույթ ունի և կապված է մշակույթի տեսության կիրառական, սոցիալ-կառավարչական հնարավորությունների բացահայտման հետ: Այս հիմնախնդիրներին համապատասխան՝ ընդհանուր մշակութաբանությունից բացի, կարելի է առանձնացնել նաև մշակութաբանության ծագումնաբանական, պատմական և կիրառական ենթաբաժիններ, որոնք կազմում են մենագրության հաջորդ բաժինների բովանդակությունը:

Հատուկ ենթաբաժին է նվիրված մշակույթային ավանդույթների՝ որպես սոցիալական կենսավորված կուտակման և հաղորդման որակապես նոր մեխանիզմի քննությանը: Մշակույթային ավանդույթը հանդես է գալիս իբրև հասարակության սոցիալական ինքնակազմակերպման համակարգի միջուկ:

Երրորդ մենագրությունը¹² նվիրված է ինքնակազմակերպման սոցիոմշակույթային տիպի մասին գիտելիքների կարևոր դերի հիմնավորմանը: Մարդկային հասարակությունը, լինելով ադապտիվ համակարգերի տարատեսակ, վերջին հարյուրամյակների ընթացքում թնակոխել է զարգացման ծայրահեղ ապակառուցողական ուղի: Այդ հիմնախնդիր լուծման մեջ որոշիչ դերը պետք է ստանձնեն մշակույթի մասին գիտությունները՝ մշակույթի ընդհանուր տեսություն, ավանդութաբանություն, ժամանակակից համաշխարհային քաղաքակրթության դինամիկայի տեսություն:

Մենագրության մեջ է. Մարգարյանը շարունակում է խորացնել մշակույթի տեսության հիմնարար հասկացությունների սահմանումները: Մշակույթը ներկայանում է որպես մարդկային գործունեության ունիվերսալ եղանակ (տեխնոլոգիա): Ըստ նրա՝ «մշակույթ» և «տեխնոլոգիա» հասկացությունները փոխյրացնում են միմյանց: Իսկ մշակութաբանությունը գիտություն է մշակույթի՝ որպես յուրահատուկ երևույթի մասին, որը նախ արտահայտում է կյանքի էվոլյուցիոն ինքնակազմակերպման որակապես հատուկ եղանակը՝ բնորոշ հասարակական կյանքի համակարգերին, ինչպես

¹² Маркарян Э. С. Наука о культуре и императивы эпохи, М., 2000, 127 с.

նան գիտություն է տարածության ու ժամանակի մեջ տվյալ երևույթի վերարտադրողական դինամիկայի օրենքների մասին:

Գրքում արծարծվում են նաև մշակութային ավանդույթներին վերաբերող հարցեր: Ավանդույթը խմբային գործունեության կարծրատիպ է, որի հիմքում ուսուցումն է: Մշակութային ավանդույթների շարժընթացը մշակույթի վերարտադրության և փոփոխությունների մեխանիզմն է:

Մենագրության վերջին երեք բաժինները նվիրված են ժամանակակից համաշխարհային քաղաքակրթության հիմնախնդիրների լուծմանը: Է. Մարգարյանի կարծիքով՝ համաշխարհային քաղաքակրթությունը համընդհանրացման դարաշրջանի ծնունդ է: Հեղինակն առաջադրում է համալիր սոցիոմշակութային նախագծեր՝ որպես հիմնարար տեսությունները քաղաքակրթության զարգացման հետ կապակցելու եղանակներ: Աշխատանքն ավարտվում է ՄԱԿ-ի՝ որպես համաշխարհային քաղաքակրթության ընդհանուր կարգավորիչ օղակի բարեփոխման առաջարկներով:

Ավելի քան կեսդարյա գիտական գործունեության ընթացքում Է. Մարգարյանը երբեք գաղափարախոսական ճնշումների չի ենթարկվել, ուստի նրա հետազոտություններով ժամանակին մեծապես հետաքրքրվել են նաև արտասահմանում: Ուսումնասիրությունները միշտ էլ աչքի են ընկել նորարարությամբ, ակադեմիական բարձր մակարդակով, որի շնորհիվ էլ ժամանակի ընթացքում չեն կորցրել իրենց գիտական արժեքը և արդիականությունը:

Գրախոսվող աշխատությունները Մարգարյանի մշակութաբանական հայեցակարգի պատմատրամաբանական զարգացման ավելի քան 45-ամյա ուղին են ներկայացնում: Հատկապես «Ընտրանու» մեջ ընդգրկված աշխատությունների շնորհիվ Է. Մարգարյանը ճանաչվում է որպես մշակույթի տեսական հիմնախնդիրների լավագույն հետազոտող: XX դարում Վ. Օստվալդից (1853-1932) ու Լ. Ուայտից (1900-1975) հետո մշակութաբանության «երրորդ ծնունդն» ու զարգացումը իրավամբ կապվում է նրա անվան հետ: Այս աշխատությունները կարելի է համարել արևմտյան ու ռուսական գիտական գրականության քննադատական վերլուծության, ստեղծագործական զարգացման, բանավիճելու արվեստի, գիտական էթիկայի սկզբունքների կիրառման փայլուն օրինակներ, որոնք կարող են յուրատեսակ «վարպետության դասերի» դեր կատարել սկսնակ գիտնականների, մշակութաբանների համար:

«Ընտրանու» առանձին բաժիններ նվիրված են Է. Մարգարյանի կյանքի ու գործունեության ժամանակագրությանը, մատենագիտությանը:

Ժողովածուն աչքի է ընկնում հրատարակչական բարձր մակարդակով, արժե նշել նաև սարյանական մոտիվներով արված ձևավորման մասին (նկարիչ՝ Պ. Պ. Եֆրեմով):

Հատորը հրատարակվել է հեղինակի քրոջ՝ Բ. Ս. Մարգարյանի նյութական հոգաձուլությամբ:

ՆԻԿՈՂՈՍՅԱՆ Մ. Ն.

Փիլիսոփայական գիտ. թեկնածու

ՀԱՅԲԱՊԵՏՅԱՆ Ս. Գ.

Փիլիսոփայական գիտ. թեկնածու